

Համաձայնեցված է

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Տ. Դավթյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան**

16 դեկտեմբերի 2010 թ. N 28

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 28

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿՄԱՆ ՄԻ
ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (18.05.2010թ. ՀՕ-63-Ն, այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (այսուհետ՝ ԱՊՊԱ) իրականացնող ընկերությունների բյուրոն (այսուհետ՝ Բյուրո)՝ իրավաբանական անձանց միության կազմակերպական-իրավական ձև ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ինքնակարգավորվող կազմակերպություն է, որին անդամակցում են Օրենքի համաձայն ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերությունները, իսկ Օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև ՀՀ կենտրոնական բանկը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն Երաշխավորման ֆոնդը Օրենքի համաձայն ստեղծված ֆոնդ է, որի կառավարիչն է Բյուրոն, և որի հաշվին Օրենքով սահմանված դեպքերում վճարվում են հատուցումներ: Երաշխավորման ֆոնդում միավորվում են Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ակտիվները: Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար Օրենքով սահմանված նպատակներով և դեպքերում: Ֆոնդի կառավարման հետ կապված հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (18.05.2010թ. ՀՕ-69-Ն):

Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Երաշխավորման ֆոնդում միավորվում են Բյուրոյի՝ Օրենքով նախատեսված կարգով հավաքագրված Բյուրոյի անդամների *միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարները*, Օրենքով սահմանված կամ օրենքով չարգելված այլ ձևերով ներդրված միջոցները, ինչպես նաև այն ակտիվները, որոնցում ներդրվել են դրանք, և դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտները: ՀՀ տարածքում ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերությունները, իսկ Օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև ՀՀ կենտրոնական բանկը, պարտավոր են Երաշխավորման ֆոնդ կատարել օրենքով սահմանված բոլոր վճարները: Երաշխավորման ֆոնդ սահմանված չափով կատարվող բոլոր վճարներն անվերադարձ են:

Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն ՀՀ կենտրոնական բանկը Բյուրոյի գրանցման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Երաշխավորման ֆոնդի համար բացում է հատուկ հաշիվ և այդ հաշվին վճարում է 15,0 մլն դրամ գումարի չափով *միանվագ վճար*: ՀՀ կենտրոնական բանկից բացի, Բյուրոյին անդամակցել կարող են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունները, որոնք ՀՀ յուրաքանչյուր մարզում

ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները:

Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն ապահովագրական ընկերությունները Բյուրոյին անդամակցելու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Երաշխավորման ֆոնդ վճարում են *միանվագ վճար*՝ 15,0 մլն դրամի չափով:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Բյուրոյին անդամակցելու օրվանից հետո՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ, Երաշխավորման ֆոնդ կատարում են *պարբերաբար վճար*՝ նախորդ 12 ամսում իրենց կնքած ԱԱՊԱ պայմանագրերից հավաքագրված և հավաքագրվելիք ապահովագրավճարների 0.5%-ի չափով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն Բյուրոյի խորհրդի առաջարկությամբ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին, եթե ըստ իր հիմնավոր կարծիքի՝ Երաշխավորման ֆոնդի միջոցները դադարեցման ողջ ժամանակահատվածում կբավարարեն Երաշխավորման ֆոնդի առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և նման դադարեցումը չի վտանգի Երաշխավորման ֆոնդի ֆինանսական կայունությունը:

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Երաշխավորման ֆոնդ *լրացուցիչ վճարները* կատարում են, եթե Երաշխավորման ֆոնդի միջոցները բավարար չեն (բավարար չեն լինի) Օրենքով սահմանված հատուցումները վճարելու կամ Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումները կատարելու համար: Միջոցների անբավարարության դեպքում 15 օրվա ընթացքում Բյուրոյի խորհուրդը որոշում է կայացնում լրացուցիչ վճարներ ներգրավելու վերաբերյալ, որով սահմանվում է հատուցումների վճարման (Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումների կատարման) համար անհրաժեշտ լրացուցիչ վճարների չափը: Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության չափանիշները, դրա մասին որոշման կայացման կարգը սահմանվում են Բյուրոյի կանոններով:

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (18.05.2010թ. ՀՕ-74-Ն՝ ուժի մեջ է մտնում 01.01.2011թ-ից) համաձայն Բյուրոն ազատվում է շահութահարկի վճարումից *Բյուրոյի կազմում ստեղծված Երաշխավորման ֆոնդին* կատարվող բոլոր վճարների, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի օգտին ստացված բոլոր այլ գումարների մասով (ներառյալ՝ այն եկամուտների մասով, որոնք ստացվել են Երաշխավորման ֆոնդի միջոցներից կատարված ներդրումներից):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (30.09.1997թ. ՀՕ-155) 8-րդ հոդվածի և 11-ր հոդվածի «ե» կետի համաձայն օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները, ծախս չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվների (այդ թվում՝ անդամավճարների) գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի «ա» կետի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք, դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով (բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25%-ի չափով):

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների և ՀՀ կենտրոնական բանկի կողմից Բյուրոյի կազմում ստեղծված Երաշխավորման ֆոնդին՝ Օրենքով սահմանված չափով կատարվող բոլոր վճարները (միանվագ վճար, պարբերաբար վճար, լրացուցիչ վճար) Բյուրոյի մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում՝ անգամ եթե այդ վճարումները կատարվել են մինչև 01.01.2011թ.:

2. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից Բյուրոյի կազմում ստեղծված Երաշխավորման ֆոնդին՝ Օրենքով սահմանված չափով կատարվող բոլոր վճարները (միանվագ վճար, պարբերաբար վճար, լրացուցիչ վճար) ապահովագրական ընկերությունների մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են որպես համախառն եկամտից նվազեցվող ծախս (ամբողջությամբ)՝ անգամ եթե այդ վճարումները կատարվել են մինչև 01.01.2011թ.: